

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍՈՇՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով
Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցմանն սողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Ir.vouk“

VARNA (Bulgarie)

Редация

на ВѢСТНИКЪ

Иравуикъ

ВАРНА

Դրոշմադրք եւ չեմ
սրոշիւր

ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Այս սիւնակներուն մէջ շատ անգամներ յիշուած ու կրկնուած է թէ Հայերու մանաւանդ թըրքահայերու համար երբէք օգտակար չէ հայրենիքի ազատութեան խնդրէն դուրս ընկերվարական և այլ օտարամուտ մտքերով ու պայքարներով զբաղիլ և ներքին դատարկութիւն կը ստեղծեն իրենց, որոնք կրնան մեր ուժերը շլատել և հայկական կամ համազգային միութիւնը պառակտել :

Մենք վստահաբար գտած էինք ասկէ տասնեակ տարիներ առաջ նաղարբէկեանի մը ձեռքով ըսկըսած և վերջին տարիներու մէջ Հին Հնչակեաններու կողմէ աւելի ընդլայնուած ընկերվարական հասանքը հայ ժողովուրդին մէջ ընդհանրապէս և հայ յեղափոխութեան մէջ մասնաւորապէս : Այդ ընկերվարական հոսանքին հետեւեալ ընդլայնումը կրնար ոչ թէ միայն մեզ նոր զբաղումներու ու դժուարութիւններու մատնել, այլ նաեւ բաժանումներ առաջ բերել, հայ ազգաբաժնի հայ հարուստին դէմ, հայ գործաւորը հայ գործարանատէրին դէմ, հայ մշակը հայ կալուածատէրին դէմ հանելով և լայն ընկերվարականը նեղ ընկերվարականին դէմ զինելով : Մինչդեռ մեր հայրենիքի փերկութեան մեծ գործը կը պահանջէ որ ամէն հայ առանց դատարկութեան խտրութեան, եղբայրակցական բոլորանուէր ջանքերով ուսուսի տուած նուիրոյի միայն այն շահիղին որ ուղղակի հայ հայրենիքին փերկութեանը կառաւորողէ : Բայց չը լսուեցան մեր և մեզ հետ շատերու գիտողութիւնները մաս մը յեղափոխական պետերու կողմէ որոնք աշխատեցին մատնանշուած վտանգները և վերացական մտքերով օգեւորուած մինչեւ իսկ դաւեցին ահագին դժուարութիւններով իրականանալ սկսած յեղափոխական ընդ-

հանուր լիութեան դէմ, հայ ընկերվարականութիւնը կանգուն և ուժով պահելու համար, կարծելով կամ հաւատալ ձեռացրեալ թէ հայրենական գործն ալ ընկերվարական գործին հետ միաժամանակ իրենց ուսին վրայ առած կրնան յառաջ տանիլ :

Սակայն, աւա՛ղ, այսօրուան մեր իրականութիւնը ցոյց կուտայ թէ մեր հեռուէն մատնանշած վտանգը եկած մեր դուռը հասած է արդէն :

Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը՝ որ ի սկզբան հայրենանուէր նպատակներով գոյութիւն ստացած էր, այսօր ինքի մէջ կը պառակտի Սօսիալիզմի պատճառաւ և ձլ պատգամաւորներէն 17 Սօսիալ Դեմոկրատները կը կոչեն ինքզինքնին, և մանիֆէստով մը կը յայտարարեն թէ ապագայ հայ սօսիալ դեմոկրատ ուսանողութիւնը իր պրօլետարիական դատարկութեան շահերու հայեցակէտով, չկրնար ձուլուիլ և միասին գործել այն ուսանողական տարրերի հետ որոնք իրենց հասարակական դաւանանքով և գործնական ձգտումներով կանգնած են ազգայնական շահերի հայեցակէտի վրայ :

Այս իմաստով մանիֆէստ մը հայ մամուլի միջոցաւ հայ ժողովուրդին ներկայացնելով իրենց նպատակն է, ինչպէս կը հասկըցուի, Հայերը հրաւիրել որ հրաժարին ազգայնական շահերու հետամուտ ըլլալէ, այսինքն հայութիւնը պահպանելու, Հայաստանը ազատելու գաղափարէն, և ընտրեն իրենց աշխարհաքաղաքացիական ուղղութիւն մը իբրեւ սօցիալ-տէմոկրատներ : Այս կը նշանակէ թէ թուրքիաբնակող Հայերը իբրեւ սօցիալիստ-ապրելու ու չը մորթուելու համար, ըստ անոնց բազմաթիւ, պէտք է հայութիւնին ուրանան, քանի որ տգէտ թուրքը զիրենք հայ ըլլալուն համար կը ջարդէ : Նոյնպէս Ռուսիոյ մէջ պէտք է Ռուս կամ թաթար ըլլալն որ ապրին ի փառս սօցիալ-տէմոկրատութեան, մինչեւ որ հասնի այն երջանիկ դարը յո-

րում գաղան թուրքը ու թաթարը գաղաններ պիտի դառնան ու պիտի դադրին մարդու արիւն թափելէ :

Մենք կը թքենք այն Սօցիալ-տէմոկրատ ուսանողներու մտքին վրայ, որոնք հայ ժողովուրդին այդ դասը կուտան : Անոնք թող երթան թուրքերուն և թաթարներուն սովորեցնեն սօսիալիզմը, որ այդ վայրենիները դադրին խաղաղ հայ ժողովուրդին արիւնը թափելէ :

Իսկ հայ ժողովուրդը իր ազգային ու հայրենասիրական նախնական զգացումներով վառւած միշտ պատրաստ ու տրամադիր պէտք է գտնուի զոհողութիւններ ընելու ամեն բանէ առաջ իր հայրենիքին փրկութեան և իր ազգային գոյութեան պահպանումին համար որով հաւատացած ենք թէ նաեւ ծառայած պիտի ըլլայ ընդհանուր մարդկութեան բարօրութեանը ու զարգացմանը :

ՀԱՅՆԵՐԸ ԵՒ ԱՐԱՐՆԵՐԸ(*)

Նէճիւր Ազուրի պէյ, Երուսաղէմի օգնական կառավարիչը և հեղինակը Ռեվիլիոյ տր իս Եսաիոն Առաջ քան ի Ազի քիւրքի, հետեւեալ նամակը գրեալ է, Լ'Առուիսի խմբագիր Տ.Միսա Չերազին—

Բարեկ 15 ապրիլ 1905

Սիրելի խմբագիր

Ձեր պատուական թերթին, և ընդհանրապէս հայ մամուլին հանդէպ, կատարելիք հաճելի պարտականութիւն մը ունենալով, ես ձեր համակրանք կը դիմեմ որ ինձ օգնէք կատարելու այս գործը, հիւրընկալութիւն տալով ձեր սիւնակներու մէջ հետեւեալ տողերուն :

Ես կուզեմ, յիշուի, հրապարակուի իմ ամբողջ շնորհակալութիւններս յայտնել ձեզ և ձեր պաշտօնականներուն, այն հրճուանքին համար որով դուք ողջունեցիք Արաբներու հայրենիքի զարթոնումը, և այս վեհանձն պայքարին համար զոր դուք պատրաստակամ եղաք յանձն առնել մեր ազգային շարժման ի նպաստ :

Ես կուզեմ նոյն շնորհակալութիւնները ձեր ամբողջ հայրենակիցներին :

Ներուն որոնք պատճառ ունին հաւատալու թէ, ձեր մեզ հանդէպ ունեցած զգացմանց և համակրանց մասնակից են :

Հայերը քաջութեամբ և ուրիշ նման բոլոր ցեղերէ առաջ, առաջարկելով օգնել, իրենց բոլոր ուժով, Արաբներուն թուրք կառավարութեան դէմ ըրած ջանքերուն, անգամ մը ևս կը ցուցնեն թէ կը հասկնան մեր շահերու մէջ ըլլալը : Ձերթօրէն ապացուցած կըլլան նաեւ թէ աւելի արժանիք մը ունին այն միւս ազգերէն որոնք նոյնպէս դեռ ճնշուալ կը մնան այն ներհակ մարմնոյ տակ որ կը կոչուի օսմանեան կայսրութիւն :

Այս արժէքը պէտք եղածին պէս ճանչցուած չէ : Անիկայ ևս կայանայ, ես կը հաւատամ, սա իրողութեան մէջ թէ հայերը չի վախցան, տասը տարի առաջ յանդուգն նախաքայլն առնել արթնցնելու ասիական ժողովուրդին մէջ ազգային զգացումը հանդէպ թուրք-Չերքէզ բռնակալութեան, ինչպէս որ Յոյներն ալ տասնութներորդ դարու սկիզբը քաջութիւնը ունեցան նշանը տալ, ազատելու Պալեստինայի ազգերը կամ մովսր Բաթիշահի անգութ թռնակալութիւնէն :

Բայց թուրքերը երբէք չի պիտի յաղթին ջուրերու մէջ մարելու Հայուն արդար անշահաբեր ինչպէս որ Եւրոպայի, Ափրիկէի և Ասիոյ միացեալ ուժերը չի կարողացան կոտորել Յոյն ապստամբութիւնը, որուն օրհնութիւնները տարածուած են հիմալ ամբողջ Պալեստինայի վրայ :

Հայ հերոսներու արիւնով ոռոգուած հողէն յառաջ եկած են երկու սոսկալի հակառակ, Գիւրտ Հայրենիքը, և Արաբներու հայրենիքը, որոնք այս վայրկեան իրենց ծանր լախտերը բարձրացուցած են բռնակալին գլխին իջեցնելու :

Պէտք է ուրեմն որ մենք հասկընանք իրար և միասնաբար, որպէսզի միասին գալինք մեր թշնամուն դէմ, այն թշնամին որ մինչեւ հիմա լուսօգտուեցաւ մեր անհամաձայնութեան մեղքը, մէկը միւսին ետեւէն, զատ զատ վշրելու, և Ալպանիոյ, Հայաստանի, Մակեդոնիոյ, Հորանի (հօրան արապի) Նէճէտի, Ենիւնի, Հիճազի մէջ գտնուած յեղափոխական ուժերը մէկը միւսին դէմ հանած է :

Այսպէս ոչ մէկ ցեղ, թուրքիոյ մէջ տրամադիր է այլ ևս գերութիւն կրել, քանի որ անոնք մէկը միւսին ետեւէն յեղափոխուեցան : Միայն անոնց իրար չը հաւսկնալն է որ կը պահէ զանոնք այն յոռիին սակ որով կը գարշին : Բայց այսօր ամբողջ Արաբ գաւառները միացած են

հայրենասիրական նոյն ոգով եւ մէկ ուղղութիւնով տակ : Հայերը արդէն միացած են մեզ : Ուրիշ խումբեր ալ կը մտնեն մեզի, եւ սպասումս օրը այնչափ հեռու չէ որչափ կը կարծախնայուի :

ԽՈՍՏԱՄԱԼԻՑ ԱՊՊԱՍ

(Շարունակութիւն եւ վերջ)

ԺԴ.

Յուշիմայի մեծ նաւամարտին՝ Յիմայի մասին Մ. Արեւելքի ջրերուն մէջ անպարտելի թօնոյի հրետանին այնքան ուժգնօրէն չորտաց օրքան իւր շոնդակից յաղթութեան համարը աշխարհի մէկ ծայրէն միւս ծայրը, աւետելով բովանդակ մարդկութեան հիւսիսային արջի թաւալազոր անկողնին, որուն ալ եղբարական վախճանին սրտատրոփ կապտեան երկար անկումը անխուսափելիօրէն բերուի իւր հետ բարբարոս ուռու քաղաքականութեան ալ անկումն :

Անկարագրելի է բովանդակ մարդկութեան զգացած սրտային ջրն՝ ծովի մէջ եւ ուրախութեամբ զոր վայելի տուաւ մեծ ծովակալ թօնն : Ողջին քեզ, ո՛վ մեծ ծովակալ հերոս թօն :

Ընդունելի ուրեմն բոլոր այն սրտային եւ անկեղծ ինդակցութեան բնույթը արտայայտութիւններն որ քեզ վերնմայիլի են, եւ ի մասնաւորի Ռուսաստանի հաղթեալ եւ մշտաշար աղբիւրն են ընդ նոցա թրքաշարներն ալ :

Դուք պիտի լինիս յետ այսորիկ անոնց պաշտաման առարկան կամ իտեալը, զի քեզ վայելէ փա՛ռք, պատիւ եւ յարգանք, որուն իսկապէս արժանի եղար :

Երէկի գոռոզ ամբարիշտը որ աւրին ի բերան «պատերազմ եւ պատերազմ» կը փրփրար ու կը գոռար, այսօր զիտապաստ գետին փռուած դունէ ի գոռ հաշտութիւն կաղերսէ կողկողալին, թէ եւ մերթ ընդ մերթ ալ զայն մերթիւ կը նկրտի վերստին կռուելու տենչանք կեղծելով, որուն համար շատ բանաւոր եւ տեղի է ըսել, «վա՛յ քեզ քաղաք որ թաղաւորդ մանուկ է : »

Փա՛ռք, մեծապանծ, յաղթող թօն :

Յաղթող չարի, եւ խուսարի :

Երէ՛ մեզ, ո՛վ մեծ հերոս Արեւելքի թօն :

Հայերս ալ իբր ըսիկ Արեւելքի ներ պարտաւոր էինք մեր սրտագին ինդակցութիւններն արտայայտել անպարտելի մեծ հերոսի, զի քու անվերապելի հրետանին եղբարական թմբակները մեզ ալ հասան, եւ մենք ալ ընտանաւոր իբր ճշմարիտ Արեւելքի սրտանց ուրախացանք քեզ նման Արեւելքի մը տարած ամենափայլուն յաղթանակին վրայ :

Մենք քու փայլուն յաղթանակներու աւետիքները մին քան ըզմիւսն կը զերարէին եւ բոլոր աշխարհ անոնցմով արքիւ կը հրճուէր, մենք կը փրտէինք ու խորապէս կը խոցուէինք, զի դեռ ոչ սպիացեալ

վերքերն աւելի խորը կը խոցէին, կովկասի մէջ հոսեցնելով մեր հայ եղբայրներու արիւններն նմանը չը տեսնուած գազանութիւններով, որով մոխրեցանք ու մոռցանք ամէն աղնիւ ու տարական պարտականութիւն :

Ուստի ի նկատի ունենալով մեր այս զմեզակ կացութիւնը, ներքեւ վերահասութեամբ ու մի վերջտանար, ինչպէս որ բովանդակ հայութիւնը՝ ընդ վշտացաւ (° ° °) այս դառնագին կոտորածներուն հանդէպ զոր Ռուսք չը խղճացին վարագորէն կատարել օր ցերեկով արեւու տակ եւ ի լուր բովանդակ աշխարհի, մենք հայերս կը մեղմենք մեր վրդտեղը մտաբերելով Ասիացուն խօսքը, «Արջք օրհասականք հզօրագոյնս կոռւին »

Դուն ալ մտաբերելով մեր ազգի կրօնական համոզումներն, որոնց մէջ մեծ տեղ կը բռնեն տակաւին «Օրհնութիւնք եւ Անէք», հաւատացիր որ բերբերոց օրհնութեանց անվերջ բաժին մը կուղղուի համապաղ չէկաւ մեծ զիջողի, բարեհաճիր գէթատոնք ընդունիլ իւր հաւատարմութեան հիացման եւ անկեղծ խնդրակցութեան :

Աշխարհի բոլոր իւր անկիւններէն գովգովին արձագանքն մեզ այսպէս կը հնչեն :

«Վարդ քացունք ձեռքերդ թօն»

ԺԵ.

Անցեալները Դիւանագէտ մը մեզ հետեւեալ կարծիքը յայտնեց, երբ մեր անյաղողութեան իբր գլխաւոր սկզբնապատճառներն նկատել կը տեսնուէր մեր ձախող եւ սխալ գործառնութիւններն :

«Այո՛, Դուք Հայերդ ունեցաք շատ ձախող եւ սխալ գործեր ու շարժումներ որոնք ձեզ շատ սուղի նստեցան, ասիկա անուրանալի է, բայց ասիկայ չէ կարելի համարել մեր անյաղողութեանց բուն գաղտնիքն կամ պատճառն : Իրենց ուրոյն քաղաքականութիւնը չունեցող բոլոր ստորակազմերը միշտ ենթակային սխալներու, զի երկար դարերու ստրկական վիճակը կ'ստեղծէ իրենց մէջ միշտ մէկգլուխ կասկածելու եւ մէկգլուխ տարակարծիք գտնուելու ստորին ունակութիւն մը, զոր ալ այս ունակութիւնէն զերծ չէք տակաւին : Բայց ասիկ, Ձեր գործառնութեանց մէջ առհասարակ հաւատարմ չափով զարգացած մարդեր ունեցած չէք : օրինակ, ամեն տեղ Ձեր մէկ գործն ընկերն զարգացման տեսակէտով իւր միւս ընկերով հակոտնենալ եղած է : Արեւելեան վառ խօսքերով նպատակին փարած է, առանց գործը սրտանց սիրելու, բայց ջանալով որ իւր հասկացողութեան չափովն գործին կողմնակի մը տայ միշտ, որ իւր ընկերով օգտակար գործը անմտօրէն հիմնադրուած ըլլած է եւ այլն : Ասոնք պատճառներ են որ աւելի ներքին ուժերը ջլատելու ընդթ ունեցած են : Իսկ բուն պատճառը սա է Ձեր անյաղողութեանց որ եւրոպական դիւանագիտութեան շահերուն հետ հաշտուած չեն մեր պահանջներն, եւ չը լուսաք թէ, զոր միայն մեր ջանքերով կրնաք փրկուել, այլ եւրոպական դիւանագիտութեան քահանայից մէկ խաղն պիտի լինի այդ, իւր շահու տեսակէտովն : Դուք պարտիք միշտ կազմ եւ արթուն գտնուել որ զիտաք առիթն օգտուել : Օրինակի համար Պուլ-

կարներու ազատութիւնն դիւանագիտական խաղի մարդիւնքն յառաջացաւ : Եւրոպական դիւանագիտութիւնը մի քանի անգամ բարեհաճ լինել թուեցաւ մեր դատին նկատմամբ ալ, բայց երբ հեռուէն հիւսիսային արջը իւր ժանիքները կը ցցէր ո՛չ մի տէրութիւն չէր ներեր իրեն իւր շահերը վտանգել մեր սիրոյն : Անսահմանօրէն ուրախանալու էք, զի Ռուս - ձառնական պատերազմը ամենամեծ փոփոխութիւն մը առեղծեց եւրոպական քաղաքականութեան մէջ, Ձեր դատին մի միակ եւ բացարձակ թշնամին ամօթահար պարտուած է այսօր, եւ իր ժանիքները փչրուած են, այլ եւս չէ կարող ըստ առաջնոյն որոտալ կամ գոռալ, եւ միջազգային քաղաքականութիւնն ալ ինքզինքը այլիւս ազատ կզգայ իւր վրայ ճնշող թաթն, ու պիտի գծէ իրեն համար նոր եւ մաքուր ուղի մը, ուստի ամենապատեհ եւ լաւ ժամանակն եկած է բոլոր ճնշող ազգերու համար իրենց ձայները բարձրացնելու : Թո՛ղ մեր գործընկերն եւ դիւանագէտներն փութան միախորհուրդ գործել այսուհետեւ, նոր դիւանագիտութեան կարենալ հետեւելու համար, եթէ զիտաք այդ քայլը առնել, փրկուած պիտի լինիք արդէն : »

Հաւատացէ՛ք որ իմ ալ համոզումներն այս են :

ԺԶ.

Այս յօդուածներու շարքին մէջ կարելի եղածն չափ համոզողակի բացատրուեցաւ մեր կրօն աղէտներու բուն պատճառին պատմութիւններն, որոնցմէ տեսնուեցաւ թէ մեր վատ թշնամիներն անգլին վաղօրօք մեզ ջարդելն ու կոտորելն ծրագրուած լինեցաւ էին, միայն թէ առիթը կորուստն եւ այդ առիթը մենք ընծայեցինք մեր թշնամիներուն շատ զիջաւ մի կարող մը յիմար գործելով, բայց մեր այս սողերէն չը հասկցուի թէ, Յեղափոխութիւնն եւ Յեղափոխականներն զատապարտել կուզենք, ոչ բնաւին, այլ միայն լաւ գիտնալ թէ, եթէ մենք խոհականութեամբ եւ շրջանայեցութեամբ գործել եւ շարժիլ զիջեալին գեթ հարաւածին ուժգնութեամբ եւ յանձնականութեամբ արգելի կրնային լինել :

Ինչ որ է, եղածն եղած է, եւ «ինչ որ եղել է դա՛ անպայման լաւն է, » ըսելէ զատ ուրիշ ճար չունինք, եւ չկայ հարկ միանգամայն անցնալի տխուր ուղիղ կամ սխալ պէճահ խնդիրներով ժամամաճառ լինել :

Օտարներն իսկ մեզ կազդարարեն թէ, խոստանալից ապագայի մը նախադրանք առնելն կանգնած կը գտնուինք, այդ դրան ճամբան հարթից քով ձառնի անկուռն բազուկը, այդ ճամբայէն անցնիլ հանդերձալ են ոտքի կանգնած ազգերն :

Յուշիմայի մեծ նաւամարտը հնչեց ահարկու ու մեծ զանգար, եւ ազդարարեց, «Եւրոպական միջազգային քաղաքականութեան վրայ ճնշող քաղաքականութեան հ յետ այսորիկ, ո՛ն ոսփի ելի՛ այդ քաղաքի սակ ճշգրտներ եւ ճնշողներ : »

Ժամէ՛ արդ մեզ համար ալ որ մեր արդար բողբի ձայնը բարձրացնենք, մէկ քառորդ դարէն աւելի է որ եւրոպական միջազգային քաղաքականութիւնը մեզ հանդէպ միշտ անպատաւ պայմաններու տակ կը գրտնուէր, այժմ իբրեւ թէ նպատաւոր լինելու երեւոյթ ունենալ կը կարծուի, ուրեմն ի՛նչ որ կարող

ենք ընել ջանանք վաղօրօք պատեհութիւնը ձեռքէ չը փախցնել : Եթէ այս անգամ ալ առիթը ձեռքէ փախցնենք գոցէ կը յետաձգուի մեր դատը, չ Ած. մի արագեց 50 տարի կամ աւելի վերջը :

Մեր Ամերիկայեան հայերը ի՛նչ կը խորհին, ի՛նչ Մարքիզին վաշինկթըն գտնուած ժամանակը պատշաճ ճեւակցութիւն մ'ունենալն տեղի պիտի գտնեն թէ անտեղի :

Վերջապէս ժամանակն է որ մեր բոլոր դիւանագէտներն, գործընկերն եւ գիտուններն (Հայ խնդիրներ, ո՛չ հնախօսութիւն եւ քաղաքականութիւն) գիտար հասկնան եւ համախորհուրդ առաջնորդեն ազգը զէպ իւր փրկութեան նաւահանգիստը :

Է՛հ, ալ բաւէ այսչափ բարեւոնա-

Զատեն

15 Ռունիս 1905

Ե Ի Բ Ո Պ Ա Յ Ի

ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Շրջաբերական Աւանակը)

Ը ն կ ե ռ ն ե ռ,

«Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւն» ներկայ տարւայ համագումարը բացեցաւ Շվեյցարիայի Բեռն քաղաքում, ապրիլի 3 ին, «Այգեր» հիւրանոցում, ներկայութեամբ 58 հոգու - պատգամաւորներ, անդամներ եւ մի քանի հիւրեր, Հիւրանոցի ճակատին, ուսանողութեան համախորհումն առիթով, կախուած էր հայկական քաղաքական զրօշակը, սեւաւորած իբրեւ նշան մեր ժողովրդական սուղի :

Համագումարը պատգամաւորներ ունէր Գերմանիայից, Ֆրանսիայից, Բելգիայից եւ Շվեյցարիայից : Առաւորական, ինչպէս եւ Անգլիական հայ ուսանողները ներկայացուցին չունէին, գոցէ այն պատճառով, որ այդ երկիրներէ մէջ, որպէս եւ իտալիայում մեր ուսանողները կապուած են վերին աստիճանի աննշան թիւ, չարկապաւ «Միութեան» հետ : Ռուսաստանի հայ ուսանողութիւնը շատ կարեւոր թեւով պաշտօնական ներկայացուցին չունէր, հաւանօրէն՝ արդենք այն անսովոր փոփոխութեան, որին ենթակայ է համալսարանական երիտասարդութիւնը Միապետութեան սահմաններում :

Համագումարի պարապմունքները տեւեցին մի շաբաթ, նախօրօք պատարասուած «Օրակարգի» համաձայն : «Միութեան» անցած գործունէութեան մանրամասն տեղեկագրին ծանօթալուց յետոյ, ժողովը անցաւ դասախօսութիւններին եւ ուսանողական մարմիններին կողմից առաջադրուած հարցերի քննութեան : Վերջին նիստերը ներկայից առաջիկայ տարւայ գործունէութեան ծրագրի քննութեան, պատրաստուած Լիազօր Կոմիտէի կողմից :

Դրա զլխաւոր կէտերը հետեւեալներն են՝

1) Պրոպագանդ եւրոպական մամուլի մէջ : Հայ ուսանողները, ծանօթ եւրոպական լրագրողներ, ունեն բոլոր յարմարութիւններ՝ իրենց ապրած քաղաքներում յարաբերութեան մէջ մտնելու մամուլի օրգաններին հետ եւ տեղեկակ պահելու հասարակաց կարծիքը հայկական քաղաքական կեանքի ընթացիկ զէպերին եւ նորութիւններին : Լրագրողներ խմբագրութիւնները, ինչպէս ցոյց են տուել

եղած փորձերը, սիրով են ընդունում այս աշխատակցութիւնը, եւ հետեւաբար նրա արդիւնաւորութիւնը անկասկածելի է :

բ) Բրոշյուրներ հայերէն լեզուով : Ներկայումս քաղաքական յեղափոխական եւ Սօցիալիստական բրոշյուրներ անգլիէն պահանջը մեր ժողովրդի կողմից, այլ եւ այն որ գրաքննական խտուրթիւնը թէ՛ է. Պոլսում եւ թէ՛ Կովկասում անհնարին են գտնւում այդ օրինակ գրականութեան հրատարակութիւնը երկրի սահմաններում : Համագումարը որոշեց՝ առաջիկայ տարին կրկնակի ուղղորդութիւն դարձնել դրա վրայ : Մինչեւ այժմ «Միութիւնը» հրատարակել է յեղափոխական գրքոյկներ՝ աւելի քան 50 օրինակ, Առաջիկայ տարին յեղափոխական գրականութեան պիտի աւելնայ սօցիալիստականը : Եթէ 250-300 հայ ուսանողների պէթ մի անշան մասը, օրինակ՝ 50 հոգի, մի-մի բրոշյուր տան, թարգմանական կամ ինքնուրոյն, մենք կարող կը լինենք տարւայ ընթացքում հայ ժողովուրդին տալ ընթերցանութեան բաւական նիւթ : Մի պայմանով, —ամեն բան չպէտք չէ սպասել Լիազոր Կոմիտէից, այլ աշխատանքը պէտք է բաժանել ամբողջ ուսանողութեան վրայ :

գ) Բրոշյուրներ եւրոպական լեզուներով : Այժմ առաջ ունենալով պարագանդային այն խոշոր գեղը որ կատարում են «Միութեան» հրատարակած բրոշյուրները (մինչեւ այժմ տպագրւած է աւելի քան 25000 օրինակ ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուներով), որոշեց շարունակել դրանց հրատարակութիւնը : Այս տարի պիտի տպագրեն գրքոյկներ իտալերէն ու անգլիերէն լեզուներով եւս : Բացի դրանից պիտի հրատարակւի եւ մի յատուկ գրքոյկ՝ ռուսերէն լեզուով, որի նպատակը պիտի լինի պարզել ռուս ընթերցողին այն դաւադիր դերքը, որ բռնել է ռուսաց կառավարութիւնը զէպի հայկական շարժումը թէ՛ Կովկասում եւ թէ՛ Հայաստանի մէջ :

դ) Հրատարակային դասախօսութիւններ : Եարունակել կազմակերպել զանազան երկրների կենդրոնական քաղաքներում հրապարակային կոնֆերանսներ եւ սիտինգներ ներառած մեր քաղաքական վիճակին : Դասախօսները պիտի լինեն հեղինակաւոր եւ քաղաքական, ծանօթ հայկական դատին : Անցեալ տարիները՝ Դերմանիայում, Շվեյցարիայում եւ Ֆրանսիայում կազմակերպւած դասախօսութիւնները ներառած էին գլխաւորապէս թիւրքահայերի դատին : Համագումարը ցանկացեալ յայտնեց, որ սրանից յետոյ կօնֆերանսների նիւթ լինի եւ Կովկասեան Հայերի խնդիրը, որը օրէն ցոր ընդունում է սուր եւ առանձին ուղղորդութեան արժանի կերպարանք :

ե) Մեծ Դպրոցում : Համագումարը կրկին անդամ ընդունելով դրա հրատարակութեան կարեւորութիւնը, որոշեւ յաջորդ կօնֆերանսներ կողմից, յանձնարարեց Լիազոր Կոմիտէին՝ բաց կարելու շուտ պատրաստել եւ լոյս ընծայել «Մեծ-ժողովածուն» :

զ) Գրաքննութիւն : Ուղղորդութեան առնելով այն բացառիկ ընդունելութիւնը, որ գտաւ «Հայաստանի քարտէզը» հայ հասարակութեան բոլոր չքմաններում : Համագումարը վաւերացրեց Լիազոր Կոմիտէի առաջարկը՝ պատրաստել հայաստակ բոլոր նահանգների առանձին-առանձին, մասնաւորապէս քարտէզները՝ լատիներէն տառերով, թէ՛ «Մեծ-ժողովածուն» մէջ զետեղելու, եւ թէ՛ դրանից անկախ տարածելու համար : Մինչեւ այժմ արդէն լոյս են տեսել «Ատրք-պատականը» եւ «Սասունը» : Պատրաստուած է «Երկրկիսան» : Նախագիծ չարքի մէջ պէտք է մանեն Հայաստանի վեց նահանգները եւ Անդրկովկասը :

Համագումարը միաձայն ընդունեց եւ հետեւեալ որոշումը : —Միութեան բոլոր անդամները, ուսանողներ եւ ուսանողներին, պարտաւոր են անդական Եւրոպական Զինավարժական ընկերութիւնների միջոցով կամ այլ եղանակով վարժել հրացանաձգութեան եւ առհասարակ զէնքի գործածութեան, մի մարզանք, որ ներ-

կայ քաղաքական պայմաններում պիտի համարւի կարեւոր եւ օգտակար : Նախահաշիւ : Նախագիծ ձեռնարկների իրականացման համար, Համագումարը կազմեց 25000 ֆր. ի տարեկան նոտահաշիւ : Այդ գումարից գանձարանի մէջ կայ այժմ մօտ տասն հազար ֆրանկ, հանգանակւած յատկապէս «Մեծ-ժողովածուն» արտադրութեան համար : Մնացած 15 հազար ֆրանկը պիտի հաւաքւի այս տարի, որի համար պահանջուում է թէ՛ Կոմիտէի եւ թէ՛ ուսանողական մարմինների եռանդուն գործակցութիւնը :

Վերջին նիստերում՝ Համագումարը որոշեց յայտնել՝

1) Համակրանք երկու բռնապետութիւնների՝ Ռուսաստանի եւ Թիւրքիայի սահմաններում տանջող բոլոր ժողովուրդների ազատագրական շարժման :

2) Համակրանք բոլոր յեղափոխական մարտական կազմակերպութիւններին, որոնք կռիւ են մղում այդ բռնապետական ռէժիմի տապալման համար :

3) Համակրանք «Պրօ Արմէնիայի» խմբագրական կոմիտէի այն ծառայութիւնների համար, որ նա ցոյց է տալիս հայկական դատին :

4) Եւրոպական Իտալիայի համալսարանական երիտասարդութեան, հայ ուսանողներին եւ հայկական դատին ցոյց տուած համակրանքի համար Համագումարը միւս որոշումները հրապարակական չեն :

Թաղողը Համագումարը կը կայանայ 1906 թ. : Տեղի որոշումը թողնւած է Լիազոր Կոմիտէին՝ ուսանողական մարմինների խորհրդակցութեամբ :

Ընկերական բարեկենդակ
ԼԻԱԶՈՐ ԿՕՄԻՏԷ
1905 մայիս,
Ժնէվ :

ԼՍՍՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Վառնայի երկսեռ հայ համարակութիւնը կը հրաւիրուի ներկայ գտնուել Դ. Բորդ լսարանական ժողովին, որ պիտի գումարուի յառաջիկայ կիրակի 12 յունիս 1905, կէս օրէ վերջ ժամը ճիշդ 3 ին զպրօցի սրահի մէջ :

Տխարք Փեշտիմայճեան, Ս. Հինտիւան անցեալ ժողովին նիւթ եղած դպրոցական խնդրի մասին առաջարկներ պիտի ներկայացնեն, եւ որոնց մասին ընդհանուր վիճարանութիւն պիտի ըլլայ :

Անցեալ ժողովին դպրոցական խնդրոյ շուրջ եղած տաք վիճարանութեանց մէջ զգալի եղաւ Պատ. Թաղ. Խորհրդոյ եւ Հոգաբարձութեան բացակայութիւնը, մարմիններ, որանք կոչուած են ուղղակի հետաքրքիր եւ հոգածու ըլլալ զէպի մեր ազգային վտրմարանները : Կը սրինք յուսալ թէ կը հաճին ներկայ ըլլալ յառիջկայ ժողովներուն :

Ի դիմաց հայկ. ընթ. վարչ. Ատենապետ Ատենադպիր Թ. Թ. ԱՐԱՊԵԱՆ Օ. ՕՀԱՆՆԱՆ 10 յունիս 1905
Վառնա

Ե Օ Ռ Օ Բ Է Է Ն

Յրաններէն միջազգային շարաքա. քերք

Նշանաւոր գրագէտներու խումբի վարչութեամբ հրատարակուող այս շաբաթաթերթը կը պաշտպանէ բոլոր հասարակարող ժողովուրդներու իրաւունքը լուրջ եւ բազմակողմանի համոզութեամբ գրուած յօդուածներով :

Գինն տարեկան 15 եւ վեցամսեայ 8 ֆր. Խնդրողին իւր նմոյշ օրինակ մը ձրի կը ղրկէ :

Հասցէն
Վարչութիւն «Էոսօքիկն»
24 Տօֆին փողոց

ԲԱՐԻՉ ԵՐԴ.

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ

(Շար. Ասիտրդ քիւնէն)

Ժ

Ամէն օրուան սովորութեանը համեմատ, դարկան իր անկողինը՝ որ անկիւն մը գէշ կը մնար՝ բացաւ, երկնցուց թոթուեց, շտկեց : Յետոյ, պզտիկ մանկալ ին մէջ քանի մը ածուխ ալ աւելցուց, եւ կրակին վրայ զետեղեց պտուկը, որ ստիով լուսիս կը պարուհակէր, օրը պահէ ըլլալուն : Սեղանին վրայ կարգադրեց պնակը, դաւը, պատառաքողը, հացը, ջրին սրուակը եւ զաւաթը : Դարեւոյ լամպան ալ մաքրեց պատրաստեց, լուցկիին տուփն ալ քովը դրաւ, ու ամբողջ պատուհանին առջեւ քաշելով, ժամադիրը առաւ՝ իրիկուան աղօթքները կարդալու : Դիչ մը ետքը խոցին դուռը բացուեցաւ : Ժամկոչն էր, որ ետ դառնալով գրնաց սանդղակին գլուխը սպասողի մը ըսաւ :

—Հրամանեցէք, հոս է :
Տէրտէրը ամբողջ ելաւ : Դրան մէկը կուգար. քանի մը քայլ անոր ընդառաջեց : Եկողը ներս մտաւ, գուռը գոցեց. քահանան, վախնալով, ետ ետ գնաց, պատին կոթնեցաւ : Այ-

ցիւն իր առջեւն էր, ֆէսը հանած, եւ ծընած՝ ձեռքը կը քաշէր համբուրելու :

—Ես քեզ մեղայ, տէ՛ր հայր, ես քեզ մեղայ միմեջեւով :

—Ամէնքս Աստուծոյ մեղայ, օրհնած, ամէնքս Աստուծոյ մեղայ, աղաղակեց տէրտէրը ալայլած ձայնով : Ու յանկարծածին յուզմամբ, այցելուին ճակատը քաշեց պագաւ :

Երկուքն ալ թաշկինակին հանեցին, աչքերնին սրեցին, ու ըստէ մը իրարու գէմ կեցան մեծ խոնջութեան մը թեթեւացած սրտով : Տէրտէրը աթոռին մէկը բերաւ Հայրապետ էֆէնտին հրամցուց, միւս աթոռն ալ ինքը առաւ, ու գէմ առ գէմ նստան :

—Է նայինք ընտո՞ր էք, աղէ՛կ էք, հարցուց էֆէնտին խանդաղատանքով :

—Փա՛ռք Աստուծոյ, ողջ առողջ եմք. ինչ ըլլալինս յայտնի է : Ազգին վիճակին ամէնքս ալ բաղդակից ենք :

—Գիտեմ, տէր հայր, գիտեմ, ազգին համար շատ բան քաշեցիք : Աստուած վարձատրուց ըլլայ : Զարչաբանքը, նեղութիւնը ամէն ուս համար ալ է : Աստուծով ամէն բան կը շտկուի :

էֆէնտին «ամէնուս համար ալ է» ին վրայ թեթեւ մը շեշտեց : Անդրադարձաւ որ քահանան կը զգուշանար իրեն բանաւարկմանը ո՛ր եւ է ակնարկութիւն ընելէ : Անշուշտ չէր ուզեր զինքը պզտիկ ձգել իր անցեալ անբարոյաւանութեանը համար : Բայց ինքը վերաւոր էֆէնտին

սիրտիւնքի կարօտ էր. ուստի խօսքը ինքը ըսաւ :

—Այնպէս է, տէր հայր, այնպէս է. ամէնքս ալ ազգին բաղդակից ենք : Մեր գլխուն ալ շատ բան եկաւ :

—Լսեցի, էֆէնտին, լսեցի, պատասխանեց տէրտէրը անկեղծ վշտակցութեամբ : Ինչ ընենք ամէնքս ալ հայ ենք : Մեր պատմութիւնը ցոյց կուտայ որ այս անօրէն մահմետականները միշտ մեր մեծերուն գլուխը կուզեն ուտել : Անշուշտ Յուշիկներուն մէջ կրակի տարուան աղետը կարգացեր էք :

—Կարգացեր եմ, տէր հայր :

—Էն առաջ մեր քաջ նախարարները այրեցին, որպէսզի անտէր անտիրական ժողովուրդը դիւրութեամբ կոտորեն : Միշտ միեւնոյն քաղաքականութեան հետեւած են :

Այս միջոցին տէր Յուսիկ տեղէն ելաւ, սուրճ պատրաստելու. էֆէնտին թող չէր տար որ նեղութիւն քաշէ : Բայց գուռը բացուեցաւ. ժամկոչը երկու սուրճ կը բերէր : Տէր Յուսիկ նեղութիւն խնդրեց, որ սիկար մը չը կիսար հրամցնել, վառնգի ինքը ծխող չէր : Էֆէնտին հաստ մը գրպանէն հանեց, ու սուրճը խմելով, խօսակցութիւնը շարունակեց :

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Կ Ա Վ Կ Ա Ս Ի Ա

Թիֆլիս վե Գութայիս վիլա-
յեթիբրին պազը գազալարընտա
վուգուա կէլէն գարըըզըզլարը
թէսքին իթմէք իչիւն Ալիսանո-
վըն Էէրինէ Բրէնս Նաբօլիօնըն
թային օլընտըզը վէ Ալիսանո-
վըն Պագու միւթէսարըքը նասպ
իսիլտիկի Թիֆլիստէն պիւտի-
րիմիշ տիր :

—1903 տէ Բէլզէնին կիւնիւնտէ
չըգմըջ օլան գանուէն լաղլ օլըն-
տը Ձարըն Էէնի պիր իւքազը
իւզէրինէ. Էանի պուստան սօն-
րա Էրմէնի րուհպանլարնըա՝ կա-
թողիկոսըն իզն ու րէյի ալըն-
մագսըզըն՝ հիւքիւմէթ ճէզա վէր-
մէյէճէք . պու սալէտէ սօն վու-
գուաթլարտան սօլայը մէնֆի
վէ մահպուս օլընան բարասլար,
րահպլէր վէ Էպիսկոպոսլար
սէրպէսթ պըրագըլտըլար :

Քիլիսէ միւլքիւրինին իտտէ.
սինէ վէ մէքթէպլէր մէսէլէսի-
նէ տայիր Էէնի հավատիս Էօգ
տըր :

—Ժընէվտէն ալաֆրանկա յու-
նիս 12 թարիխլէ «Բրօ Արմէնի-
ա»յա պէր վէճհի աթի իշար օ-
լընմըջ տըր :

«Ձարիզմ բօլիթիգասընըն
րուս Էրմէնիստանընտա հուսուլա
կէթիթիթի տէհէթ թասալ-
վուրաթ խարիճինտէ տիր : Թա-
թարլար վէ Էրմէնիլէր պէյին-
տէ գանլը միւսատէմէլէր տէվամ
խտիյօրլար : Բօլիսիս վահիճա-
սընա Էրմէնիլէրին սիւհլարը-
նը թօրլամագտա տըր : Թաթար-
լար սիւհլանմայա հէր նէվ
սէրպէսթիկէ հայիզ տիրլէր :

«Պագուտա իսլամ չէթալարը
չէհրէ սահիպ օլուպ, թաթիլի
մէչղուլիյէթ իտէն Էրմէնի, կիւր-
ճի վէ րուս իշճիլէրի ճէպրէն
իշլէմէկէ իճպար իտէյօրլար :

«Էրեւանտա իքի գազագ զա-
պիթլէրի Թաթարլարա սիւհա
թալիմի իթտիրիյօրլար : Ճիվար-
տա չօգ քէօյլէր խարապ օլմուշ
տըրլար :

«Թիֆլիստէ բօլիս գօմանտանը
թաթար վէ րուս չէթալարը Էր-
մէնիլէր իւզէրինէ հիւճուճ իթ-
տիրմէք իչիւն սիւհլանտըրիյօր :

«Օրտուպատ վէ Շարուր գա-
զալարընտա իսլամ չէթալարը
մէյտանա չըգտըլար :

«Շէհրիլէրտէ Էհալի քէնտիսի-
նի մուհաֆազա իթմէք իչիւն
միլիսիա թէչքիլինէ միւսատէ
թալէպ իտէյօր :

Ր Ո Ւ Ս Ի Ա

Ձէմսթօլարըն վէ պէլէտի-
յէլէրին մուրախալարընտան Մօռ

կուստա թէճէմմիւ օլընան գօն-
կրէ թարաֆընտան թանգիմօլըն-
մըջ լաիհէի Ձարա թաղտիմ
իթմէք իչիւն Բէթերսպուրկա
կէօնտէրիլէն հէյէթի մախսուսէ
հուզուրը իմրէրաթօրիէ գա-
պուլ օլընմուշ տըր : վէ
մէքքիւր հէյէթ թարաֆընտան
Բրէնս Թրուպէթսօյ Ձարըն
հուզուրընտա աթիտէքի նուլթ-
զը իրատ իթմիշ տիր :

«Րուս Էհալիսի՝ վաթանըէր-
վէրլիքտէ տէվամ վէ Ձարա Էմ-
նիյէթինտէ վէ Րուսիանըն մէ-
թին գուվլէթինէ սէպաթ իթ-
մէքտէ օլուպ, մաղլուպիյէթլէ-
րին վէ տախիլի ույկուսըգ-
լըզլարըն ասըլ սէպէպլէրինի
անլայամայօր վէ զանո իտէյօր քի
քէնտիսիալտանիյօր վէ Ձարտալի
ալտանմագտա տըր, զիրա Ձարըն
արզուլարընա մուզայիր իշլէնի-
լիյօր : Էհալի հէր թարաֆտա,
ժէնէրալլարտա, իմրէրաթօրըն
միւլքիլիլէրինտէ (խորհրդական)
վէ պիւթիւն մէմուրլարտա խա-
յինլէր արամագտա տըր :

«Պու տախիլի պէլալարըն Էէ-
քանէ չարէսի Էհալիտէն ինթի-
խապ օլընմըջ մէպուսլարըն թէ-
ճէմմիւսի տիր : Ֆագաթ Է-
հալինին հիշ պիր գըմը ին-
թիլխապ հագգընտան մահրուճ
գալմամալը. զիրա պու հագգտան
մահրուճ գալանլար Էէնի թէչ-
քիլաթա խասիմ օլուրլար : Մէճ-
լիսի մէպուսան ումուճ միլ-
լէթին մէպուսլարընտան թէչ-
քիլ օլընմալը տըր, զիրա Ձար
Էալընըզ ասըլգատէլէրին, քէօյ-
լիլէրին վէ թիւճարլարըն Ձարը
օլմայուպ պիւթիւն Րուսիանըն
Ձարը տըր :

«Պիւթիւն մէմալիքտէ իտա-
րէի իսթիպատաթ (պիւռօգրաթ)
մէվճուտ տըր. ֆագաթ պու ի-
տարէ հատընը թէճալիլզ իթ-
մէմէլի վէ հիւքիւմտարըն հու-
գուգընը զասպ էյլէմէմէլի տիր :

«Միլլէթ մէպուսանը միւս-
թագիլ [անկախ] օլմալը տըր :
Րուսիանըն Էէնի թէչքիլաթը
էմնիյէթ իւզէրինէ թէճէսիս օլըն-
մալը տըր :

«Պու նուլթգա ճէվապէն Ձար
պիր ուզուէն նուլթգ իտուպ,
Ձէմսթօլարըն տույկուլարընա
թէչէքիւրաթ վէ Էմնիյէթինի
պէյան իթմիշ . մուհարէպէնին
նէթիճէլէրինտէն վէ տօնան-
մանըն մահվընտան տօլայը թէէ-
սիւքիլինի կէօսթէրմիշ, վէ տէմիշ,
«մէմալիքին հալը հաղըրընը
թէպուլի վէ իսլահ իթմէք իչիւն
արզուլարընը իճրասընա սի-
զին տախի Էարտըմա արզուքէչ
պուլընմանըզտանտօլայը մէմու-
նըմ : Միլլէթին մէպուսլարընը
տալէթ իթմէք արզուլըն թէպ-
տիլ ու թաղըրիլ միւլքիլիսիզ
տիր : պու մագսէտլէ հէր կիւն
տըգգաթ իթմէքտէյիմ քի ար-
զուճ իճրա օլընսըն : Պուսու

սիզ Էհալիէ իլան իտէ-
պիլիթսինիզ վէ պուկիւնտէն իթի-
պարէն պու խըզլէթտէ պանա
Էարտըմ իտէճէքսինիզ : Մէճ-
լիսի միլլի՝ սապըգը իւզրէ Րու-
սիա վէ Ձար պէյինտէ իթթի-
հատ հուսուլա կէթիթէճէք տիր,
վէ Րուսիա գարար վէ զալպ-
լարընը թէքրար գաղանաճագ
վէ պիլ իթթիֆաթ վէ ասըլ
րուս մէպուտէսի իւզէրինէ չալը-
չարագ էմնիյէթ ու ասայիշ
իւզգա օլընաճագ տըր :

Ձարըն պու նուլթգը մուրա-
խասլար իւզէրինէ Էէք կիւզէլ
թէէսիլ իթմիշ . Ձար քէնտիսի
տախի չօգ մէսուր օլմուշ :

«Բէթէրսպուրկա Էագըն պիր
մահէլտէ պօլպա ֆապրիդասը
պուլընուպ, 18 ատէտ հաղրի վէ
120 ատէտ հաղրիլանմագտա օլան
պօմպալար էլէ կէչիլիշ, վէ իքի
կէնճ տէրաթէսթ օլընմըջ :

«Եհալիսիլէրի ինթիլապ
հագգընտան մահրուճ պըրագ-
մագ խուսուսընտա կէզէն չայէա-
լար Վարչալատա Էէնի գարըըզ-
լըզլարա սէպէպ վէրմիշ տիր :
Պաշլըճա Էհալիսիլէրտէն միւլթէ-
չէքքիլ նիւմայիշճիլէր վէ ասքէր
պէյինտէ միւսատէմէլէր վագու
պուլմուշ տըր : Ձէնիլինլէրին խա-
նէլէրին Էագմայա վէրմէք
թէհտիլի իւզէրինէ, պիր չօգ
պէօյիւք մէմուրլար վէ զէնիլի-
լէր Վարչալատան գաչմագտա
ըմըչլար : Շէհրի տաքէր գօրտօ-
նը ալթրինա ալընաճագ տըր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Մէյտանը մուհարէպէտէ Էվ-
վէլքիլտէն տահա զիյատէ թէ-
լաշ հիւքմ իտէյօր, ճարօնլար
միւլթարէքտէն Էվլէլ պէօյիւկ
պիր ֆիլթուհաթ տահա զաղան-
մագ Էքքէարը իլէ Րուսլարը
թաագիպ իտէյօրլար :

«Տէյլի թէլէկրաֆ»ա Թօքիօ-
տան պիլտիրիթիլինէ պինաէն,
ճարօնլըլար իլէրլէմէկէ տէվամի-
տէրէք րուս օրտուսընը իքի գօլ-
տան իհաթէլթմիշլէր տիր : Մու-
հարէպէ մէյտանընտա Էարտըմ մի-
լիոնտան զիյատէ ճարօն ասքէ-
րի մէվճուտ տըր :

«Սուլհ միւզէքէրէսինէ մախ-
սուս ճարօն մուրախալարըն
ալաֆրանկա օգոտոտս. 1 տէ վա-
չիլիլթօնա Էէթիլէճէքլէրինի
ճարօն Էլչիսի Մ. Րուզլէլթէ պէ-
յան իթմիշ տիր :

«Պիր թէլէկրաֆա պինաէն,
քօլէրա վէ իսալ իլլէթի խար-
պինտէքի րուս օրտուսընա պէօ-
յիլի խասարաթ վէրմէքտէ ի-
միշ. հէր կիւն Էիւզլէրճէ ինսան
էօլմէքտէ : 56000 տէն զիյատէ
խասթա վէ Էարէլի չէհրտէն
տըչարը չըգարըլուպ, մախսուս
պարագալարա նազլ օլընմըչ-
լար :

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Ի Է

Սէն Գեղաւ նամ ինկիլիզ վա-
բօրըն րուս հարպ վաբօրլարըն-
տան պաթըրըմըջ օլմասը սէ-
պէպի իլէ Բքի տէվլէթ պէյին-
տէ նօթալար թաթի օլընմըջ
տըր : ինկիլիզ հիւքիւմէթի իշ-
պու մէսէլէի աղըր կէօրիյօր :
Պու խուսուստա Բարլըմանտա
իսթիճէվապ վագու պուլտու :

«Րուս հիւքիւմէթի 500 միլլիոն
ֆիլչէնի Ալմանիայա սըրարիշ իթ-
միշ տիր :

«Շքօտրատա զէրզէլէ տէվամ
իտէյօր. ճիվար տաղլար Էէնի
մէնպարէլէր իպրազ իտէյօրլար :
Շիտտէթի պիր գասըրկա զու-
հուրի իլէ պազը խանէլէր Էր-
գըլտը, խօրթուճ թէէսիլի իլէ
աղաճլար քէօքլէրինտէն չէքիլ-
տիլէր վէ պիւթիւն նէպատաթ
խարապ օլտու :

«Էքաթէրինիսլա վիլայէթի
տախիլինտէ պուլընան Եուսօվքա
չէհրինտէն պիլտիրիթիլի իւզ-
րէ, պիր րուս չիրքէթինէ ալիտ
օլան պիր մատէն աթէշ տըլըջ
վէ 500 քիշի թէլէթ օլընմըջ :

ԾԱՆՈԹ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (182 էջ) 1 ֆր.
» Բ. » (433 էջ) 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳՈՐԱՆ կամ ՄՐԱՄԱՆՆ
ՀԱՅԿԱԿՈՆ Էրկրորդ անգամ տպագ-
րուած Է. ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-
նիւրո նիստ ու կացը ու թուրքիլ-
կրած տառապանքը անոնց ազատու-
թեանն առաջ. Գին 50 անցիմ

ՀԱՅԵՐԵՆԻԿԻ ՁՈՒՆԵՐ Պատկեր
մը Տաճկահայաստանի յիւրական լիւսն-
քէն : Ձեզչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար զիմի
ՎԱՌՆԱ «Ի ր աւ ու ղ ք» ի խմբագ-
րութեան

ՍՕՅԻՍ. Տ. Օննիկ Գարուիանի
ՊՈՒԳՐԵՇ Տ. Օննիկ Փափագեանի

Է. Յ. Պիպէճեանի
ԳՍԱՅԻՍՆԱՅԱՆ Տ. Սիսակ Մէլիքեանի

ԳԱՀԻՐԻ Տ. Կարապետ Էրզնկացեանի
ԱՂԵՔԱՅԱՆԻՐԻՍ Տ. Ստեփան Մագ-
մանեանի

ՈՒՍՏՐ (Ասիերկա) Տ. Յակոբ Յարմո-
եանի

ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանապի
ՓՐՕՎԻՏԷՆՍ Տ. Մ. Տէր Պողոսեանի

ԹԱՏՐՈՆ ԳՕՐԻՍ

Սյուրի, շարաթ պիշեր, մամր 9 ու
կէսին, տապին անգամ ըլլալով «վի-
ՍէլլՕ» խմբին կողմէ պիտի ներկա-
յացուի :

ԿԱՐՄԻՐ ԿԱՏՈՒԻ ԳԻՆԵՏՈՒՆԸ
Տրամ գօմէտի 4 արար

Երգ Է. պարք Օր. Բարաթօրի կողմէ
կիսա ծիծաղալարթ տուէթներ
Տիկին Ամալիայի Է. Պ. Թօտօրի կող-
մէ :

Կատակերգութիւն 1 արար

Одговорникъ А. Курбетиянъ
печатающа П. Глушковъ и С.но—Варна